ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/78 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Երևան	**«16»** սեպտեմբերի 2024թ. ժամը՝ 11:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«23» օգոստոսի 2024թ. թիվ 1564-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության «Շիրակի մարզի Սարատակ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/78** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սպարտակ Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Նշան Հակոբյան, Լիլիթ Պետրոսյան, Լուսինե Ղազարյան, Վարդինե Իսահակյան, Արմինե Մակարյան

Հանձնաժողովը արձանագրեց, որ՝

1. ***Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին***

Հայտերը բացվել են 2024 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 11:00-ին Armeps համակարգով, հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլնեցի 31, 2-րդ հարկ, 209 սենյակ:

2. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները***

Armeps համակարգով էլեկտրոնային տարբերակով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցե, հեռ
1	«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ, ներկայացված ենթակապալ՝ «Գոհարիկ» ՍՊԸ	sos.andriasyan@mail.ru, ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լ. Մադոյան 287, +374 98417852, metsnerik@yandex.ru, ՀՀ ք. Երևան Արշակունյաց պող. 67/15, +374 (094)41-78-47, (010)44-46-66 goharik.spy@mail.ru, ՀՀ, Շիրակի մարզ, Գետափ 4 փ. տ.12, ` 0244-5-28-08

3. ***Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից հայտը (ծրարը) կազմվել և ներկայացվել է էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և հրավերով սահմանված կարգով:

4. ***Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.***

Չափաբաժին 1 **ՀՀ «Շիրակի մարզի Սարատակ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքներ**

ՀՀ դրամ

Հ/Հ	***Գնման Գին***	***Մասնակցի անվանումը***	***Առաջարկված գինը առանց ԱԱՀ***	***ԱԱՀ***	***Ընդհանուր գինը***	***Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ)***
1	**1 761 651 080**	«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ	**1,612,500,000**	**322,500,000**	**1,935,000,000**	առկա է

5 Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հանձնաժողովը փաստում է, որ հայտը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել է էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և ենթակա է հետագա գնահատման:

6 Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

6.1 **«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ-ի՝** նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը ռեզիդենտ մասնակիցների՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

6.2 Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

7 Հանձնաժողովը որոշեց.

7.1 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.1-ին կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ **«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ և «Մեծն Էրիկ» ՍՊԸ ՀԳ-ի՝** նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների

հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

7.2 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկին՝ պարզելու Մասնակցի բանկային երաշխիքի իսկությունը:

8 Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 7-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝	
Սպարտակ Պետրոսյան	
անդամներ՝	
Մարատ Մանասյան	
Նշան Հակոբյան	
Լիլիթ Պետրոսյան	
Լուսինե Ղազարյան	
Վարդինե Իսահակյան	
Արմինե Մակարյան	
քարտուղար՝	
Ալիսա Նիկոլայան	